Կարմրուկի կանխարգելման և դեպքերի մասին հաղորդման ուղեցույց ճամբարների համար

1. Ի՞նչ է կարմրուկը

Կարմրուկը լուրջ հիվանդություն է, որը հեշտությամբ և արագորեն տարածվում է: Տասը մարդկանցից ինը, ովքեր չեն պատվաստվել կարմրուկի դեմ կամ նախկինում չեն վարակվել, ձեռք կբերեն վարակը, եթե շփվեն կարմրուկով հիվանդ մարդու հետ: Կարմրուկն օդակաթիլային վիրուս է և տարածվում է օդում, երբ վարակված մարդը շնչում, խոսում, փռշտում կամ հազում է: Կարմրուկով վարակվելը լուրջ վտանգ է այն մարդկանց առողջության համար, որոնք նախկինում երբևէ չեն վարակվել կամ չեն ստացել Կարմրուկ-կարմրախտ-խոզուկի՝ ԿԿԽ (MMR), կամ ԿԿԽ+Ջրծաղիկի (MMRV) պատվաստանյութը: Վարակված 1000 մարդուց 1-5 կարող է հոսպիտալացման կարիք ունենալ, իսկ 3-ը՝ դժբախտաբար մահանալ:

Ճամբարներում, որտեղ կան մեծ թվով չպատվաստված ճամբարականներ և անձնակազմի անդամներ, կարմրուկը կարող է շատ հեշտությամբ տարածվել և վարակել մարդկանց մեծ խմբերի՝ հանգեցնելով հոսպիտալացման և ծանր հիվանդության:

Գլխավոր տեղեկություն

- Կարմրուկը վիրուս է, որն ապրում է քթում և կոկորդում: Այն չափազանց վարակիչ է և հեշտությամբ տարածվում է օդի միջոցով, երբ վարակված անձը խոսում, շնչում, հազում կամ փռշտում է:
- Կարմրուկը վտանգավոր է այն ճամբարականների և անձնակազմի անդամների առողջության համար, որոնք նախկինում երբևէ չեն հիվանդացել կարմրուկով կամ չեն ստացել ԿԿԽ կամ ԿԿԽ+Ջրծաղիկ պատվաստանյութը:
- Պատվաստանյութը լավագույն միջոցն է ճամբարում կարմրուկով վարակվելը և այն տարածելը կանխելու համար:
- Հանրային Առողջության Վարչությունը քայլեր է անում՝ կանխելու կարմրուկի տարածումը, սակայն այն ձեր օգնության կարիքն ունի:

2. Որո՞նք են կարմրուկի տարածված ախտանիշերը

- Բարձր ջերմություն (101°F կամ ավելի բարձր)
- Հազ
- Քթահոսություն
- Կարմրած, արցունքոտ աչքեր
- Ցան, որը նախ առաջանում է դեմքի վրա և տարածվում դեպի մարմնի մյուս մասերը:
- Կարմրուկով հիվանդները վարակող են ախտանիշների հայտնվելուն նախորդող 4-րդ օրվանից մինչև ախտանիշների հայտնվելուց հետո 4-րդ օրը:

3. Պատվաստումը ձեր լավագույն պաշտպանությունն է

ԿԿԽ (MMR) կամ ԿԿԽ+Ջրծաղիկ (MMRV) պատվաստանյութերի երկու դեղաչափ ստանալն ամենաարդյունավետն է կարմրուկից պաշտպանվելու համար: ԿԿԽ պատվաստանյութն անվտանգ է և շատ լավ կանխարգելում է կարմրուկը: Երկու դեղաչափը 97% տոկոսով է արդյունավետ կարմրուկը կանխարգելելու գործում, իսկ մեկ դեղաչափը՝ 93%-ով:

4. Անվտանգության միջոցառումներ ճամբարում

- Պահանջել բոլոր ճամբարականներից և անձնակազմից ներկայացնել բոլոր պատվաստումների փաստթղթերը, որոնք վկայում են, թե ինչի դեմ են պատվաստումները: Գրանցեք ձեր ճամաբարում և ճամբարականների, և անձնակազմի պատվաստումների տոկոսները: Այս տվյալները կարող են օգտագործվել վարակի վտանգը գնահատելու և ճամբարի քաղաքականությունը ուղենշելու համար:
- Ապահովեք, որ ճամբարի անձնակազմը պատրաստված լինի կարմրուկի ախտանիշները ճանաչելու համար և ունենա ընթացակարգեր՝ կարմրուկ ունենալու կասկածի դեպքում անձին անմիջապես մեկուսացնելու և իրավիճակին արձագանքելու համար:

- Հանձնարարեք ծնողներին/խնամակալներին տեղեկացնել ճամբարին ողջ սեզոնի ընթացքում կարմրուկի հետ հնարավոր շփման դեպքերի մասին, ներառյալ այցելությունների օրերին, գիշերները, հանգստյան օրերին և այցելությունների միջև ընկած ժամանակահատվածում շփումների մասին:

5. Որտե՞ղ կարող են պատվաստվել ճամբարականները և անձնակազմի անդամները

Ապահովագրություն ունեցող անձինք պետք է զանգահարեն իրենց բժշկին կամ տարածքային դեղատուն, որպեսզի ստանան ԿԿԽ (MMR) կամ ԿԿԽ+Ջրծաղիկի (MMRV) պատվաստանյութ: Բժշկական ապահովագրությունների մեծ մասը փակում է երեխաների և մեծահասակների բոլոր անհրաժեշտ պատվաստումների ծախսերը: Բժշկական ապահովագրություն կամ հիմնական բժշկական մատակարար չունեցող անձինք կարող են այցելել ph.lacounty.gov/VaccineClinics կամ զանգահարել 2-1-1՝ անվճար կամ ցածր արժեքով պատվաստումների կլինիկաների ցանկը տեսնելու համար:

6. Ի՞նչ անել, եթե կարմրուկի կասկած կա

- **Վարակի վերահսկում:** Նախազգուշական միջոցներ ձեռնարկեք վարակի դեմ, օրինակ՝ քանի դեռ ճամբարականի կամ անձնակազմի անդամի վիճակը գնահատվում է, նրան մեկուսացրեք փակ դռով սենյակում՝ սահմանափակելով խոցելի մարդկանց մուտքը տարածք:
- **Զննում:** Ուշադրություն դարձրեք ճամբարականների և անձնակազմի անդամների՝ հիվանդության ախտանիշներին, մասնավորապես նրանց ախտանիշներին, որոնք հավանական է կամ հայտնի է, որ շփում են ունեցել կարմրուկով հիվանդ անձանց հետ:

  Եթե որևէ մեկը կարմրուկի ախտանիշներ ունի, հետևեք ներքևի աղյուսակում նշված ցուցումներին.

Զննում / մեկուսացում	Անձնակազմի անդամները, ճամբարականները կամ այցելուները, որոնք հաստատվել է կամ կասկած կա, որ կարմրուկ ունեն, պետք է անմիջապես հեռացվեն ճամբարից և կարող են վերադառնալ ցանի հայտնվելուց 4 օր հետո: ***Ծանոթություն:*** Ցանի առաջացման օրը համարվում է օր 0: • Այն անչափահասներին, որոնք հայտնի է կամ կասկած կա, որ կարմրուկ ունեն, պետք է առանձնացնել փակ դռով սենյակում, մինչև ծնողը/խնամակալը կարողանա նրանց վերցնել և բժշկը կարողանա զննել: • Անձնակազմի անդամները և 2 տարեկանից մեծ երեխաները պետք է կրեն դեմքին կիպ նստող դիմակ:
Հաղորդում	• Անմիջապես կապ հաստատեք «Պատվաստանյութով կանխարգելվող հիվանդությունների վերահսկման» ծրագրի հետ (Vaccine Preventable Disease Control Program), եթե կասկածում եք, որ ճամբարում գտնվող անձը կարմրուկ ունի կամ եթե նրա մոտ կարմրուկ է ախտորոշվել: • Երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը առավոտյան 8:30-ից մինչև երեկոյան 5:00-ն, զանգահարեք (213) 351-7800՝ հերթապահ համաճարակաբանի հետ կապի համար: • Աշխատանքային ժամերից հետո զանգահարեք (213) 974-1234 և սեղմեք 8՝ հերթապահ վարչական պաշտոնյայի հետ (AOD) կապի համար:

Հավելյալ տեղեկություններ և աղբյուրներ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության «Պատվաստանյութերով կանխարգելվող հիվանդությունների վերահսկման» ծրագիր
(LA DPH Vaccine Preventable Disease Control Program)
ph.lacounty.gov/measles

«Ճամբարներում առողջության» միություն
(Alliance for Camp Health)
Elevating Care Weekly: Edition 03 | On Measles - Alliance for Camp Health

Հիվանդությունների Կանխարգելման և Վերահսկման Կենտրոնների ուղեցույց
(CDC Guidance)
«Կարմրուկի կանխարգելման մասին տեղեկատվություն ճամբարների համար»
«Պաշտպանեք ձեր երեխաներին կարմրուկից» գծապատկեր| Կարմրուկ | ՀՎԿԿ